


**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆ ԵՒ

ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Թէ՛ բնական աշխարհի և թէ՛ մարդկային կեանքի մէջ երևոյթներն ու իրողութիւնները պէտք է երկու կողմերէ դիտել, որոնք թէպէտ արտաքինապէս իրարու հակառակ կը թուին, բայց իրականին մէջ զիրար կը լրացնեն։ Այսպէս, մարդուն մէջ կան օրինաւորութեան և անկախութեան, պահպանողականութեան և ազատականութեան, հաստիքութեան և աշխտիրութեան, անհատաւորութեան և հաւաքապաշտութեան, օգտապաշտութեան և քաղաքացիական պաշտութեան միտումներ և ձգտումներ, որոնք կեանքը կը հաւաստարակչուն։ Եթէ բոլոր փիլիսոփայական գրութիւնները, գիտական տեսութիւնները, օրէնսդրութիւնները, և կրօնները, մէկ խօսքով եթէ մարդկային պատմութիւնը ուսումնասիրենք պիտի տեսնենք որ կեանքը այս երևոյթներուն մէկ ծայրէն դէպի միւս ծայրը միշտ շարժած է, և այդ շարժումը ժողովուրդին և ժամանակին համեմատ արբեր դոյն և սաստկութիւն ցուցուցած է։ Կայ նաև ազգայնականութեան և միջազգայնականութեան մղումներ, որոնք այսօր իբրէ՛ն կարեւոր և զործօն ազգակներ ժամանակից պատմութիւնը կերտող ոյժեր են։ Նորակազմ պետիկ պիտութիւնները և արեւելեան ազգե-

րը այսօր վարակուած են ա՛լ աւելի թունդ ազգայնական ոգիով, ազգուելով եւրոպական մշակոյթի հետ իրենց ունեցած յարաբերութիւններէն։ Իսկ արեւմտեան ժողովուրդներու մեծամասնութեան մէջ կը տեսնուին՝ ազգայնական զգացումին չափ զօրաւոր և տեղ տեղ առկէ աւելի ազգեցիկ և զերակշիռ՝ միջազգայնական խմորումներ։

Եկեղեցին պէտք է միշտ ժամանակին ու գին ուսումնասիրէ և իր զործունէութեան միջոցներուն կերպերը անոր համեմատ յարմարցնէ, որպէսզի իր նպատակին իրագործումը կարենայ ապահովել, որպէսզի իբր վերացուցիչ, շինիչ, կրթիչ ազգակ մը, իբր հոգիները փրկութեան առաջնորդող գերագոյն կազմակերպութիւն մը կարենայ իր պաշտօնը կատարել։ Շատ կարեւոր է մեզի գիտնալ թէ Աւետարանը մեզի ի՞նչ լոյս կուտայ այս խնդրին մասին։

Նախ հասկնանք թէ ի՞նչ է ազգայնականութիւնը և միջազգայնականութիւնը։ Ազգայնականութիւնը այն գիտակցութիւնն է՝ թէ մարդուն պատկանած ցեղը, ժողովուրդը, ազգը, երկիրը ունի առաքինութիւններ, բարեմասնութիւններ, աւանդութիւններ, սովորութիւններ, գաղափարներ որոնք արժանի են գոբրգորանքով պահուելու, ունի հարստութիւններ և իրաւունքներ որոնք պէտք է պաշտպանուին ամէն գինով։ Իսկ միջազգայնական զգացումով տողորուած մէկը կ'ըսէ

թէ ցեղային նախապաշարումը ներկայիս մեծագոյն ուղէտներէն մէկն է մարդկային կեանքի մէջ, ազգայնական զգացումներն են որ յաճախ ժողովուրդներու մէջ ատելութեան, նախանձի, մրցակցութեան և կռիւի պատճառ կը գտնան, վտանգելով աշխարհի խաղաղութիւնը: Թէ պէտք է ժողովուրդները, երկիրները իրարմէ անջատող պատուարները քանդել, պէտք է կազմել տիեզերական եզրայրութիւնը այս կամ այն ձևով, հաստատելու համար աեւական խաղաղութիւնը:

Յիսուս իր վարդապետութիւններուն մէջ այսպիսի խնդիրները ուղղակի չէ շօշափած. Անոր և առաքելական դարու եկեղեցիին կեանքը ուսումնասիրելէ վերջ միայն կրնանք լուսաւորուել այս նիւթին մասին: Յիսուս և առաքեալները Հրեայ էին, և ապրեցան իրենց հրեայ: Յիսուս կը սիրէր իր ազգը, կը յարգէր Մովսիսական օրէնքը և մարգարէները իրենց ժամանակից դպիրներէն աւելի, թափանցելով անոնց հոգեւոր իմաստին խորը, կը զթար թշուառ հրեայ ժողովուրդին, խոր վիշտով կը համակուէր տեսնելով անոր մութ մօտիկ ապագան և կուլար (Մատթ. 23. 37, Ղուկ. 19. 21): Մեծ առաքեալը, Տարսնցի Պօղոս, մինչեւ վերջը իր սրտին խորը վառ պահեց իր ազգին հանդէպ տաքուկ սէր մը, միշտ առարկայ ընելով դայն իր աղօթքներուն, բոլոր իր ցեղակիցներուն նման ինքն ալ ազգուած էր այն գաղափարէն՝ թէ հրեաները Աստուծոյ կողմանէ մասնաւորապէս ընտրուած ժողովուրդ մ'էին, և արժանացած՝ Աստուածային մեծ խոստումներուն. բայց խորապէս կը տանջուէր, տեսնելով որ անոնք կը մերժէին Քրիստոսը: Բայց Յիսուսի կեանքը Հրէութեան սահմաններով չէր պարփակուած, այն ո՛չ թէ տեղական կամ ցեղային ա՛յլ տիեզերական և համամարդկային էր: Այդ եզական կեանքը կը զտնուէր այդպիսի բարձրութեան մը վրայ՝ ուր մարդիկ չեն գտնորոշուիր իրենց ցեղային, տեղային բարեմասնութիւններով և յատկութիւններով, այլ իրենց ունեցած հոգեւոր արժանիքով:

Ահա այսպէս Յիսուսի (նաեւ առաքեալներու) կեանքին մէջ կը գտնենք թէ ազգայնական և թէ մարդկայնական զգացումները համերաշխ միութիւն մը, ամբողջութիւն մը կազմած են: Գութ ու գութութեանք տառիկ

իրեններուն հանդէպ, յարգել և գնահատել այն բոլոր բարեմասնութիւնները, գանձերը զոր իր ազգը ունի, և ուստի գանձք անվրէժար պահել (Մատթ. 5. 18), բայց միեւնոյն ատեն կարեկցել բոլոր մարդերուն, ծառայութեան և նուիրումի ոգին ցուցնել բոլոր աշխարհին, իր սէրը չմասնաւորել, այլ բոլոր մարդկութիւնը իր սիրոյն առարկայ ընել (Յովհ. 3. 16), քանդելով բոլոր միջցեղային, միջերկրային ատելութեան, նախանձի պատուարները— ահա ասոնք են գիծերը այն կատարեալ կեանքին, որուն մէջ ազգայինը և համամարդկայինը իրարու հակամարտ տարբեր չեն ա՛յլ լրացացիչ մասեր:

Հայը, ինչպէս նաեւ բոլոր ժողովուրդները, պէտք է գութութեան իրենց աւանդական բարի գանձերուն վրայ, զորոնք պահել իրենց արդար իրաւունքն է, բայց պէտք է կարեկցի սիրտ մ'ունենան գնահատելու և յարգելու նաեւ ուրիշներուն: Առողջ Քրիստոսեան գերծ է միշտ ազգամուտութեան տեսչէն և օտարամուտութեան թուլութենէն և անզուսպութենէն:

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐԾՆԵՐ

Երբորդ՝ Կրօնքն և ուր կ'օգնէ մեզի պաշտելու, Սիրելու անկախ էակ մը, և յաւաքերէքը անկախ անձի մը հետ՝ որ կը յովանդակի իր մեջ անկէ պատուական քարոյսական յատկութիւններն ու անկէ կ'աւանդուի:

Այնիւ և բարձր նկարագրի տէր մէկու մը հետ յարաբերել ինքնին մեծ բազմ մ'է: Մեր նկարագրին վրայ անոր բարի ազդեցութիւնը ոչ ոք կրնայ ուրանալ: Կրօնքը մեզ կը դնէ անհուն սրբութեան առջև: Կրօնքը հոգեւոր խորհուրդածութիւնով և երախտագիտութիւնով մեզ Տիեզերքի Հօրը կը տանի: Այն գերազոյն Բարիին հետ հաղորդակցութեան գիտակցութիւնը ինքնին մեր միտքը կը լուսաւորէ և սիրտը կ'ազնուացնէ: Այսպէս կրօնքը մեր կենաց սկզբունքը ըլլալով, մեր էութեան մէջ մեծ փոփոխութիւն յառաջ կը բերէ, մեզի նոր տեսիլք կուտայ, որով մեզ շրջապատող հոգեւոր աշխարհին և անտեսանելի

լին հետ հաղորդակցութիւն կ'ունենանք, և Ամենասուրբին հետ բարեկամութիւն կը մշակենք: Այս բարեկամութիւնը անմահանալի է, և նկարագրի վրայ ազդեցութիւնը թանկագին: Յովհաննէս Առաքեալ Յորգանանի մօտ՝ իւր միւս ընկերներով միասին Յիսուսի հետ ունեցած առաջին իրենց տեսակցութիւնը 60 տարի ետքը ժամերով կը յիշէ: Այն տեսակցութեան բարի ազդեցութիւնը ո՞վ կրնայ նկարագրել:

Նաեւ տեսնենք թէ կրօնքը կենաց ուրիշ կողմերուն և մտաւորական զարգացումին լո՞նչպէս կ'օգնէ: Կրօնքը արեւելահայկան սկզբունք մ'է, և անոր ազդեցութիւնը մեր էութեան ամբողջութեան վրայ է: Մարդկային բնութեան մէջ ինչ որ բարի, իմաստուն, դորձնական, ազգու, գեղեցիկ, մեծ և երջանկարեր է, կրօնքը անոր աճելուն, զարգանալուն և կատարելագործուելուն կը ծառայէ: Մարդ մարմնով, մտքով, և հոգեով զարգանալու է: Լոկ աղօթող, միայն հոգեւոր խորհուրդածութեամբ պարապող, միշտ Ս. Գիրք կարգացող մարդը չէ կատարեալ Մարդը: Ընկերային կենցաղավարութիւն ալ պէտք է մարդուն: Կեանքի մաս կազմող ամէն ինչ կրօնքի զոհել բարիք մը չէ մարդուն համար: Մարդուն ամբողջ բնութիւնը, կենաց ամէն մասը ներդաշնակ գործելու և համեմատաբար զարգանալու է, որ ան կարենայ երջանիկ ըլլալ:

Արդեօք կրօնքը ճշմարտութիւնը գիտնալու համար մեր մտային կարողութեանց կը նպաստէ: Այո, տեսնենք թէ լո՞նչպէս:—

(1) Մարդ կրօնքով իր մտքին բուն արժէքը կը ճանչնայ: Միայն կրօնքով գիտենք թէ մեր միտքը Աստուծոյ բղխած է, իմաստութիւնը և ճշմարտութիւնը գիտնալու և ըմբռնելու զօրութիւնը Անկէ առած է: Ասկէ կը հետեցնեմ թէ ան անհուն Միտքը իմ մտքիս ծնունդ տուած ըլլալով, ինձմով կը հետաքրքրուի, իմ վրաս կը հսկէ, զիս կ'առաջնորդէ, իր ճշմարտութիւնները ինձի կը հաղորդէ: Անոր հետ յարաբերելով անվախճան մտաւորական զարգացումի ասպարէզ կը բացուի իմ առջև:

(2) Կրօնքը մտածութեան ամէն տեսակ նիւթերու մասին նոր շահախնդրութիւն կը հաղորդէ՝ մեզի: Երբ խորհնք թէ ստեղծ-

ուած ամէն ինչ գերազոյն էակին հետ կենսական յարաբերութիւն ունի, անդադար Անոր խնամքին նշանակակէտն է, ամէն ինչ Անոր ձեռացը գործն է, արեւը, լուսինը, աստղերը, լեռները, ծովերը... և այլն, աչքիս տարրեր կերենան: Աստուծոյ ձեռքով զընուած բաց գիրք մը կ'ըլլան մեր առջև, Անոր խորհուրդները անոնց ամենուն ներսը դրոշմուած կը տեսնենք: Ուրեմն՝ ամէն ճշմարիտ գիտութիւն էապէս կրօնական է: Առանց կրօնքի գիտութիւնը չոր բան մը կ'ըլլայ: Գիտութիւնը մեզի տեսանելի դարձած միտք և իմացականութիւն է: Գիտութիւնը այս իմացականութիւնը քննելով կ'ըզգալի, իր ամէն մէկ գիւտը Աստուծոյ միտքը հասկնալ է, չի կայ ճշմարիտ գիտութիւն առանց կրօնքի:

(3) Միտքը դէպ ի կատարելութեան տանելու մէջ կրօնքի ազդեցութիւնը շատ մեծ է: Կրօնքը մեզի կը յանձնարարէ՝ թէ մեր տեսութիւնը մաքուր, և ճշմարտութիւնը սիրելու և ընդունելու մասին անաչառ ըլլալու է: Անկեղծութիւնը գիրքերէ, ուսուցիչներէ, զօլէճներէ և համալսարաններէ աւելի արժէքաւոր է:— Առանց անկեղծութեան ու պարզութեան և իւր սխալը տեսնելու և ընդունելու պատրաստակամութեան, վերջապէս առանց ճշմարտութիւնը ամենէն վեր բռնելու և զայն պաշտելու սէրը ունենալու, ամէն միտաւորական դանձ՝ նախապաշարումի և փառասիրութեան ծառայելէ զատ օգուտ մը պիտի չունենայ: Ամենավեաստիար և թունաւորիչ սկզբունքներ իրենց ծագումը՝ մտաւորապէս զօրաւոր մարդոցմէ առած են: Ուրեմն՝ ուղիղ և արդարաւստի միտք ունենալու համար կրօնքի ազդեցութեան կարօտ ենք: Կրօնքն է որ մեզի կը սորվեցնէ թէ Աստուծոյ սուրբ աչքերը մեր վրայ կը հսկեն, և կ'ստիպէ որ մենք ալ մեր վրայ հսկենք և ամէն արտաքին շահախնդրութենէ ազատ խորհնք, խորհելու առեն մեր կիրքերէն չ'ազդուինք, միայն ճշմարտութիւնը խորհնք, փնտռենք և սիրենք: Կրօնքն է որ միտքը ճշմարտութեան կը բռնայ, կրօնքն է այն մթնոլորտը՝ որուն մէջ մեր բանականութիւնը կը լուսաւորուի:

(4) Կրօնքը մտքի առջև ամենամեծ ճշմարտութիւններ կը բանայ և մեզ երկնային երջանկութեան հաղորդակից կ'ընէ: Կատա-

ընդլսթիան մասին նոր գաղափարներ, անմահութեան նկատմամբ նոր համոզումներ, Աստուծոյ մասին նոր ներքին գիտակցութիւններ, մեր հոգեւոր բնութեան վրայով նոր մտքի տեսութիւններ մեզի իրեն յայտնութիւն կուզան: Այս բաները մեր առջեւ այնպիսի լոյսով մը կը պարզուին, որ այս աշխարհէն չէ: Այս լոյսով մարդկային միտքը տիեզերքի խորերը կը տեսնէ, դէպքերու նշանակութիւնը տեսիլ լայն կը տեսնէ, հանգերծեալ կեանքի մասին նոր նշոյլներ կուեննայ, զորս թէեւ մարդկային լեզուով կատարելապէս չենք կրնար նկարագրել, սակայն կրօնական աչքով զանոնք կը տեսնենք իր իրողութիւններ:

Այսպէս, կրօնքը մեզի համար գերազանց բարիք մ'է, մեր ամենաբարձր կարողութիւններուն կեանք և ոյժ կուտայ, զանոնք ամենամեծ և ներդաշնակ գործունէութեան մէջ կը դնէ և մեզ գէպի կատարելութիւն կը մղէ:

Հապա ի՞նչպէս կը պատահի որ անկրօններու մէջ բարձր բարոյականի տէր մարդիկ կը գտնուին: Այս հարցումին պատասխանը սրտէն է, այսպիսիներուն բարոյականութիւնը իրենցը չէ: Անկախ տիեզերք և անկախ բարոյականութիւն չկայ: Մութ տեղ թէեւ ծառեր և ծաղիկներ կը մեծնան անոնք կերպով մը արեւէն կ'օգտուին, և եթէ բոլորովին արեւու տակ ըլլային աւելի գեղեցիկ և աւելի զարգացեալ առնկիւր պիտի ըլլային: Այսպէս առանց կրօնքի բարոյականութեան տէր մարդիկ, եթէ կրօնասէր ըլլային, աւելի բարձր կեանք մը պիտի ունենային:

Սիրելի երիտասարդ ազգակիցներ, մեր ամենակարեւոր պէտքը այսօր Բրիտանիան է: Կրօնք և ազօթասիրութիւն է:

ՎԵՐՋ

Կ. Յ. Յ.

ԹՈՎՄԱՍ ԱԼՎԱ ԷՏԻՍԸՆ*

Մեծանուն հնարիչ Թովմաս Ալվա Էտիսըն, ծնած է Ամերիկա, Օհաիո նահանգին Միլան քաղաքին համետ ու ցածուկ տունէրէն մէկուն մէջ: Իր կեանքի մանկութեան շրջանին շատ չէ ազդուած իր հօրմէն, բայց

(*) Էտիսըն ներկայիս ապրող 12 մեծագոյն մարգերէն, անմահներէն մէկն է, 12 անձերէ բաղկացեալ յանձնարարութիւն մը տեղեկատուութեան համեմատ:

խորապէս կրած է իր մօրը դրօշմը, որուն վերայ հիացող մ'եղած է: Մայրը գորգացեալ Գանատացի վարժուհի մըն էր, որմէ ժառանգեց սիրոյ և գուրգուրանքի այնպիսի առաքելութիւններ, որոնք իր նկարագրին յատկանշական գիծերը կազմեցին և ապրեցան իրեն հետ:

Հօրը չքաւորութեանը պատճառաւ Էտիսըն, տակաւին իր ծաղիկ հասակին մէջ, սկըսու վաճառականական պատիկ ձեռնարկներու, թրէններու մէջ պտուղ և անուշիկէն ծախելով:

Էտիսըն իր հնարիչի մեծ ձիրքը յայտնարեց առաջին անգամ այն տունը որը յղացաւ իրեն յատուկ պատիկ մամուլ մը հնարելու գաղափարը, որով պիտի հրատարակէր իր սեփական լրագիրը, երբ ինք տակաւին հազիւ տասն և չորս տարեկան կար: Յաջողութիւնը չուշացաւ: Կրցաւ հրատարակել իր ծրագրած լրագիրը, որ օրերորդի մը թաշկինակէն շատ ալ մեծ չէր:

Երկայն պատմութիւն մը պիտի ըլլար մանրամասնօրէն նկարագրել Էտիսընի պատանեկութեան օրերը, բան մը որ մեր նպատակէն դուրս է: Տակաւին շատ պատիկ, ան կը հետաքրքրուէր երկտարականութեամբ և կ'աշխատէր հեռագրատուններու մէջ: Կարճ ժամանակի մը մէջ ան կրցաւ երեան բերել իր այդ ճիւղին մէջ ունեցած բնատուր ձիրքը:

Այս ժամանակները, իր ազատ պահերուն կատարեց քանի մը պատիկ գրեւոր՝ ապահովելու համար մի քանի տոլարի համետ եկամուտ մը, սակայն բաղդը իրեն չժպտեցաւ: Ան հնարեց քուէարկելու մեքենայ մը, որ թէպէտեւ հանճարեղ յղացում մըն էր, սակայն անգործնական էր և ընդունելութիւն չգտաւ: Այս անյաջողութենէն վերջ, Էտիսըն այլևս ուխտեց չհնարել այնպիսի բաներ՝ որոնք գործնական պիտի չըլլային և կամ մարդկութեան պիտի չծառայէին:

Էտիսըն՝ կեանքի նպատակ ըրած էր մինչև իր օրը աշխարհ եկած հնարիչներէն ամէնէն մեծը ըլլալ: Եւ օր մը իր բարեկամներուն կ'ըսէր. «Ես՝ աշխարհ շատ ընկիւքներ ունիմ, և կեանքը աշխարհ կարճ ու վաղանցիկ կը տեսնեմ, որ երբեմն կը փորձուիմ յուսահատիլ»: Շատ երկարատեւ ու համբերատար աշխատող մըն էր, իր գաղափարները ունէ

մէկուն չէր վստահիր, ուրիշներուն չէր յայտնիր իր ծրագիրները, և չէր պարծենար իր ըրածովը և կամ ընելիքովը: Պարկէշտութիւնը համեստութիւնը և պարզութիւնը իրեն հետ ծներ էին և իրեն հետ ալ կ'ապրէին:

Գոլէճի նման բարձր դպրոց մը չէր յաճախած, այլ իր ուսումը ստացած էր իր իսկ գրասենեակին մէջ, զոր սեփական գոլէճի մը վերածած էր, հոն բերելով աշխարհի մեծ մարդոց ու հռչակաւոր գիտուններու գլուխ-գործոցները: Գիշեր ցորեկ կ'ուսումնասիրէր ան և յաճախ կ'ուռէր և կը քնանար իր աշխատանքի սեղանին առջև, տթոսին վրայ նստած: Ծառ երկայն չէր քնանար էտիսըն, և կապուելու համար երկայն քնանալու անհրաժեշտութիւնն ալ չէր զգար: Բաւական կը սեպէրօրը 4-5 ժամուայ քուն մը, մընացելով թանկագին ժամերը կը յատկացնէր ուսումնասիրութեան և աշխատանքի:

Էտիսընի հնարած գործիքները և գիւտերը մի առ մի թուել չատ երկայն պիտի ըլլար. կը բաւէ յիշել միայն մի քանիները զապփար մը տալու համար այն մեծ ու քրտնաջան աշխատանքին և պրպտող ու անխոնջ մտքին մասին:

Ան խորհեցաւ լուռաւորութիւն աւելի լաւ դրութիւն մը գտնել և իր յաջողութեան վըստան ձեռնարկեց ելեկտրական լամպարնիւն շինութեան: Ամիսներ տևող երկայն ու յոգնեցուցիչ աշխատանքէ մը յետոյ ինք և իր աշխատակիցները յաջողեցան պատրաստել լամպար մը, որ 48 ժամ շարունակ վառեցաւ կարմրորակ և աղօտ լոյսով մը, և իր յանկարծ մարեցաւ իր ետին թողուց խումբ մը վասնողակաբիկ բայց ուրախ մարդիկ, որոնք իրենց յաջողութեամբը գինովցած գիրար կը շնորհաւորէին, այս մեծ ու օգտակար գործի կատարման մէջ իւրաքանչիւրին բերած բաժնին համար:

Երբ ան հնարեց ձայնագիրը, գուշակեց նաև այն մեծ ծառայութիւնները, զորս ան պիտի մատուցանէր մարդկութեան: Ինք վստահ էր թէ ձայնագիրը պիտի յատկացուէր մասնաւորապէս երաժշտութեան և հաւանական էր որ ուսուցիչի մը պաշտօնն ալ կատարէր: Իրր ընտանիքի մի արձանագրելը անոր արժէքը մեծ ու անգնահատելի պիտի ըլլար. որովհետեւ ան էր որ մեկմէ յաւէտ բաժ-

նուող սիրելիներու ձայնը մեր մօտը պիտի պահէր հոգեվարքին վերջին պատգամներն ու կտակները իր հարազատ ձայնովը, շեշտովը ու բառերովը պիտի արձանագրէր, գալիք սերունդներուն լսել պիտի տար Լինգրնի մը և կամ Կլասթօնի մը տտենարանութիւնները: Այս բոլոր նախատեսութիւնները և տակաւին հնարչին մտքէն իսկ չանցած չատ մը նման գործնական ծառայութիւնները իրականացած են այսօր:

Երբ 1914 ին ընդհանուր պատերազմը պայթեցաւ, բոլոր Ամերիկացիները յուսացին թէ Էտիսըն պիտի հնարէր այնպիսի ահռելի և քանդիչ ռազմական գործիքներ, որոնք ահ ու սարսափի պիտի մատնէին թշնամին: Բայց չիրականացաւ իրենց այդ յոյսը: Էտիսըն օգնեց իր հայրենիքին, բացարձակապէս պաշտպանողական և ո՛չ թէ յարձակողական ու քանդիչ նպատակներու ծառայելու համար: Ան հնարեց ընդծովեայի գոյութիւնը յայտնող գործիք մը, որ մեծ ծառայութիւն մատուց ռազմաւաւերուն. նաև հնարեց *Portakol* կոչուող զգուշացնող ուրիշ մեքենայ մը, որ անհամեմատօրէն պակսեցուց այդ աղետաւոր պայթեցուցիչին պատուհանները:

Էտիսըն 1889 թ. մահուը այցելած է Եւրոպա հիւրասիրութեամբ զանազան երկիրներու արքայական պալատներուն մէջ, արժանանալով մեծ շքանշաններու: Ստացած է նաև բազմաթիւ պատուոյ յիշատակներ: Բայց իր վայելած այս բոլոր պատիւներն ու յարգանքները կարելի չէ համապատասխան վարձատրութիւնը նկատել մարդկութեան մատուցած իր մեծ ծառայութիւններուն:

ՎԱՀՐԱՄ

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ՏԵՐՈՋԸ ԱԶՔԻՆ ՀԱՄԱՐ

Յոյն քանդակագործ մը բարձրաբերձ մեհեան մը զարդարելու պաշտօնը ստանձնած էր. իր գործատէրերը զինք կը յանդիմանեն թէ ինչո՞ւ սիւներու խոյակներու վերի մակերեսը և ամեն այցելողին ուշադրութիւնը զբաւող մասերը նոյն վարպետութեամբ և նուրբ ճարտարութեամբ կը քանդակէր: Անոնք իրեն հարցուցին թէ ի՞նչու իր ձիրքը կը

վառնէ հոն՝ ուր մարդկային ոչ մէկ աչք չի պիտի կրնայ տեսնել իր արուեստը և թէ երկիրն քի թոշունները միայն կրնան այգալիսի տեղ մը կենալ: Քանզակապործը աչքերը վերցուց, գրոցը վայրկեան մը քարէն վար առաւ և պատասխանեց, «Աստուածները պիտի տեսնեն զայն», ապա շարունակեց իր գործին:

Սորունկ իմաստ մը կայ հեթանոս արուեստագէտին այս խօսքերուն մէջ: Մենք նոյն պարկեշտութեամբ կատարելու ենք մեր գործերը երբ անոնք ծածուկ մնան և մարդկային աչքերու անտեսանելի ըլլան, իբր թէ անոնք բաց եղած ըլլային աշխարհի մանրակրկէտ հետազոտութեան, ինչու որ Աստուած կը տեսնէ զանոնք: Մենք ա՛յնքան ամբիժ և գեղեցիկ ապրելու ենք ծածուկ տեղերը, որ չափ որ պիտի ապրէինք ամենուն տեսանելի և ծանօթ տեղերը: Իրականին մէջ չկայ բան մը որ դադարնի մնայ աշխարհի վրայ: Մենք կը կարծենք թէ որեւէ աչք չի տեսներ մեզ երբ մարդկային աչքերէ հեռու ենք, սակայն իրապէս մենք միշտ գիտողներ ունինք: Մենք կ'ապրինք Աստուծոյ և հրեշտակներու ներկայութեան: Ուրիմ մենք գմեղ վարժեցնենք երկնային աչքին համար գործել ամէն բան՝ որպէսզի մեր գործերը կարենան երկնային քննութեան դիմանալ և որ մենք կարենանք Աստուծոյ հաճութիւնն ու զրուատիքը ունենալ:

Թարգ. Պ. Լ.

ՃԱՄԲՈՐԴԻՆ ԵՐԳԸ

1. Ճամբորդ, ըսէ՛, ուր կ'երթաս Գաւազանդ ձեռքդ առած: Տէրոջը կամքին համաձայն, Կ'երթամ Երկիր մ'աննման. Այս երկրի բարձր լեռներէն, Դաշտերէն ու անտառներէն, Դաշտերէն ու անտառներէն, Կ'երթամ դէպի հայրենիք:
2. Ճամբորդ, ըսէ՛, ի՞նչ յուսաս, Գաննել դու այդ երկրի մէջ: Ծերմակ գլխատ, թագ ոսկեղէն, Ընդունիլ փրկչիւ ձեռքէն. Հոն, ուր կենաց գետերն հոսին, Ուր Սարոնի վարդերն բացունին. Ուր Սարոնի վարդերն բացունին, Երբ որ երաշտ օրերն անցնին:

3. Ճամբորդ, չունի՞ս դուն բնաւ վախ, Երբ դուն երթաս միայնակ: Ոչ, զի անթիւ հրեշտակներ կը տարածեն իրենց թևեր. Յիսուս ինքն է քովս կեցած, Չ'պատահիր ինձ մի արկած. Չ'պատահիր ինձ մի արկած, Մինչև հասնիմ հայրենիք:

4. Ճամբորդ, զիս ալ տար միասին Այն երկիրն հիւանալի: Եկ, իմ ձեռքեր քեզ կ'երկարեմ, Որ իզձերդ կատարեմ. Արդ հետեւէ ինձ հաւատքով, Որ պսակուինք փառքով պատուով, Որ պսակուինք փառքով պատուով, Երբ որ հասնինք հայրենիք:

Թարգ. Գ. Երմ. Մ. ՍԻՆԱՆՆԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՀՈՎՈՒԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ Ի ԶԱՀԼԷ

Լիբանանի մէջ Ջահլէն ի հինուց օգափոխութեան համար յարմար վայր մ'եղած է իր պաղ ջուրով, առատ խաղողով, չոր և մաքուր օդով, և իր քաղքի մը հանգամանքով: Ամառնային տաք եղանակին անոր զրօսավայրերուն մէջ միշտ նշմարելի են, աւհն կրօնքէ և ազգէ մարդիկ, իրենց սեփհական տարազովն ու լեզուովը: Սուրիոյ ուրիշ վայրերուն մէջ ամառը զաղարի և անգործութեան եղանակ մըն է, սակայն Ջահլէի մէջ՝ ընդհակառակը գործի և աշխատանքի շրջան մըն է. եկեղեցիներ կը լեցունին, տուններ վարձու կը տրուին, չուկան բազմութեամբ կը խճողուին:

Կիլիկիոյ պարպումով Հայերը երբ Սուրիոյ տարբեր տեղերը ապաստան կը գտնէին, Ջահլէն ալ բացաւ իւր հիւրնկալ ծոցը քանի մը հազար գժրաղդ ու վտարանդի Հայ բնկորներուն: Ասոնց մէջ կային Հայ Աւետարանականներ՝ որոնք զգալով իրենց հոգեկան անօթութիւնը, կազմեցին իրենց եկեղեցին, ուր իբր քարոզիչ պաշտօնավարած են Տիար Հ. Սիմոնեան, Պատ. Հ. Ղազարեան և արդի հովիւր Պատ. Յ. Շնորհօքեան, որուն ձեռնադրութիւնը կատարուեցաւ, Օգոս. 26ին:

Պատ. Յ. Ծնորհօքեան անցեալ տարի Պէյրութի Ամերիկ. երկրական Աստուածաբանական ճեմարանէն շրջանաւարտ ըլլալէ վերջ Զահլէի եկեղեցիին հրաւերը ընդունած ըլլալով տարիէ մը ի վեր հոն կը պաշտօնավարէր: Ժողովուրդը խիստ դո՛ւ մնացած իր անխոնջ ծառայութենէն, և զգալով ձեռնդրեալ հովիւի մը պէտքը, միաձայնութեամբ որոշեցին անոր ձեռնադրութիւնը, զոր քիչ ատիւ Զալէպի մէջ գումարուած Միութեան ժողովն ալ վաւերացուց: Ինչպէս որ Զահլէցին անհամբեր տմառուան կը սպասէ, այս պատիկ հօտն ալ սպասեց նոյն եղանակին իրենց փափաքին իրագործման համար, որ հանդիպեցաւ Օգոս. 26ի կիրակի օրուան:

Վերոյիշեալ արարողութիւնը կատարելու համար հրաւիրուած էին Վ. Բ. Ռիկզ՝ Պէյրութէն, Վ. Ե. Հատիտեան՝ Պէյրութ-Քէմը եկեղեցիէն, Վ. Ե. Կէօքէօղեան՝ Պէյրութ-Քաղաք եկեղեցիէն, Վ. Ե. Սարեան՝ Տօմասկոսի եկեղեցիէն, և Վ. Ե. Հաճճար՝ Զահլէի Արար Բող. եկեղեցիէն: Յանձնախումբի համար Ա. Պետ Վ. Ե. Հատիտեան ընտրուեցաւ և Վ. Ե. Կէօքէօղեան՝ Ա. Դպիր:

Օգոս. 25, Եսբաթ երեկոյեան ժամը 7. 30ին (Ը. Ե.), տեղւոյն երկրական եկեղեցւոյն մէջ 300 հոգիներու ներկայութեան կատարուեցաւ նորընծային քննութիւնը: Առաջին անգամ Պատ. Յ. Ծնորհօքեան իր ինքնուրիշութիւնը պատկերացնող գրութիւն մը կարդաց որուն նախաբանը իր համառօտ կենսագրականն էր: Ծնողքը բնիկ Այնթապցի, սակայն ինքը ծնած Պաղէէ 1871ին, երբ իր հայրը քարոզչութեան պաշտօնը կը վարէր հոն: Այնթապի Գոլէճէն շրջանաւարտ ըլլալէ վերջ քանի մը տարիներ ուսուցչութեամբ զբաղած, յետոյ վաճառական եղած մինչև ընդհանուր պատերազմը: Պատերազմէն հաջորդ անպաշտօն կերպով Այնթապի եկեղեցիին մէջ զբօսած է: Վերջը Քէսապի եկեղեցիին մէջ 2 տարի իւր քարոզիչ պաշտօնավարած է: 53 տարեկանին Պէյրութի երեք տարուան Աստուածաբանութեան ճիւղին հետեւած և զայն աւարտելէն վերջ Զահլէէն հրաւիրուած է:

Իր գրութեան երկրորդ մասին մէջ կը յայտնէր թէ ինչո՞ւ վերջապէս այս պաշտօնը ընտրած է, և ըստ նպատակը ի՞նչ է: Իր կեանքին մէջ երեք անգամ Աստուածաբանա-

կան ճեմարանէն կարդալու համար հրաւերներ ստացած, ընդ առաջին երկուքը մերժած և վերջին երրորդին խոնարհելով ընդունած էր: Երբ 1902ին Քէսապի մէջ ուսուցչութիւն կ'ընէր հոն ապաշխարած է և ատկից ի վեր անմահ հոգիներուն արժէքը զինք կը վառէր և գործի կը հրաւիրէր: Իր ներքին փափաքը և Յիսուս Քրիստոսի սէրը զինք աշպէս մղած էին այս նուիրական գործին:

Գրութեան երրորդ մասը կը պարունակէր իր հաւատքին վերաբերեալ կարգ մը կէտեր. որոնք զրեթէ մեր հաւատոյ-հանգանակին ամփոփումն էին, որուն մէջ Վ. Ե. Ծնորհօքեան կը յիշէր այն բոլոր էական բաները, որոնց ինք կը հաւատար:

Այս գրութեան ընթերցումէն հաջորդ յանձնախումբին կողմանէ եղան հարցումներ՝ որոնք կը շօշափէին աստուածաբանական, վարդապետական, սակայն ալ աւելի հոգեկան՝ ու կենսական խնդիրներ, որոնց պատասխանները գո՛ւ թողուցին թէ՛ ձեռնադրութեան յանձնախումբը և թէ՛ հանդիսականները: Այն գիշեր ամէն մարդ լաւ տպաւորութեամբ մեկնեցաւ, ինքզինք աղօթքով պատրաստելու վաղուան աւելի հանգիստը և սուրբ արարողութեան:

* * *

Կիրակի կէսօրէն վերջը պիտի կատարուէր ձեռնադրութեան արարողութիւնը. ժամը 3.30ին արդէն լեցուած էր եկեղեցին մօտաւորապէս 700 հանդիսականներով...: Իեմին վրան բաղմած էին Վ. Ե. Բ. Ռիկզ, Ե. Հատիտեան, Ե. Սարեան, Ե. Կէօքէօղեան, Հաճճար, Գ. Ե. Զանաւեան: Պաշտամունքը սկսաւ փառարանութեան երգով, որմէ վերջ 23րդ Սաղմոսը ժողովուրդով միասին ըսուեցաւ յօտնկալս: Վ. Ե. Հատիտեան կարդաց Քիւր. Գ. Գլուխ և Գործ Առաք. Ժ. 1—3 համարները. Զեռնադրութեան խորհրդ տուաւ Վ. Ե. Բ. Ռիկզ, որուն նիւթն էր Կող. 1: 18 համարը: Ան ծանրացաւ Քրիստոսի անձին վերայ, յիշեց թէ պէտք եղողը Քրիստոսն է, ոչ թէ Քրիստոնէութիւնը, եթէ այս եկեղեցին կ'ուզէ յաջողիլ իր նոր հովիւով, պէտք է ունենայ Յիսուս Քրիստոսը իրեն հետ: 28րդ պատեղ այս քարոզը թափանցեց ներկաներուն շատերուն հոգիներուն մէջ. Զեռնադրութեան,

աղօթիլ ըրաւ Վեր. Ն. Սարեան, ծնրագրած նորընծային գլխուն, շրջապատուելով վերոյիշեալ 5 պատուելիներէ: Ներշնչման մըթնոլորտ մը կը պատէր, մինչդեռ աղօթողը Ս. Հոգւոյն ազդեցութեան ներքեւ կը շարունակէր աղօթելու: Աղօթքէն վերջ նորընծային ձեռք տուաւ և բարի գալուստ մաղթեց Վեր. Ն. Կէօքկէօղեան: Նորընծային խրատական տուաւ Վեր. Հատիտեան, որ մանրամասնօրէն յիշեց այն բոլոր բարի յատկութիւններն որոնք անհրաժեշտ են ամեն մէկ քարոզչին: Ժողովուրդին ուղղուած խրատականը ըրաւ Վեր. Հաճճար, Արարիքէն լեզուով: Ան հրաւիրեց զանոնք որպէս զի օգնեն իրենց հովիւին և անոր ձեռքերը վեր վերցնեն, ինչպէս որ պատերազմի միջոցին Մովսէսի ձեռքերը վեր վերցուցան յաղթութեան համար: Գեր. Ժանսըզեան խրատեց ծնողները, որ կրթեն իրենց մանուկները և ազգը յառաջ տանին և նորընծային ըսաւ. «Առաջնորդէ՛ այս հօտը և ըսէ՛ Աստուծոյ, ահա՛ ևս և իմիններս»: Փրօֆ. Յ. Իւվէզեանի ղեկավարութեամբ մերթ ընթ մերթ երգիչ խմբին երգած կտորները, ինչպէս «Ամեն Հայր Սուրբ», «Սուրբ. Սուրբ» և «Ալ մօտ ըլլամ, ո՛վ Տէր», տարբեր եղանակներով, գիւթեցին ներկաները. երգերուն պատրաստութեան համար շատ քանք թափուած էր: Մօտ երկու ժամ տևող այս պաշտամունքը հոգիները սլացուց դէպի վեր, շատերուն աչքերէն ուրախութեան արցունքներ խլեց: Նորընծային օրհնութեան աղօթքով ամեն մարդ ազդուած իր տունը վերադարձաւ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՐԲԱԳՐԱԿԱՆ

Բրիտանիկալիս և Ազգայնականութիւն

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Բարոյականութիւն և Կրօն

Վեր. Կ. Յ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Թ. Ա. Էսխարև

ՎԱՀՐԱՄ

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

Տիրոջը Աջին հաւատ

ԹԱՐԳ. Պ. Լ.

Ճակարկիկ Երգը

ԹԱՐԳ. Մ. ՍԻՆԱՆԵԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Հովսէփիկ Զեռնարութիւն ի Զանդ

Վեր. Ե. ԿԵՕԲԿԵՕԶԵԱՆ

Իմ մաղթանքս և աղօթքս այն է թէ Տէրը Վեր. Յակոբ Շնորհօքեանը իր հօտով միտին իբր լոյս գործածէ Զահլէի մէջ, և պատճառ ըլլայ բազմաթիւ անմահ հոգիներուն ապաշխարութեան... Ս.մէն:

ԵՆՈՎՔ ԿԵՕԲԿԵՕԶԵԱՆ

«ՆՈՐ ԱՒԵՏ»-Ի ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿՈՒԱԾ ԹԵՐԹԵՐ

3. ԵՓՐԱՏ. Այգ. Բաղաթա. Կրական և Գիտական, կը հրատարակուի Զորեքշարթի և Շարաթ օրերը, բաժնեկին՝ Սուրիա տարեկան 55 դր. ոսկեգրամ, արտասահման՝ 3.50 տոլար, Իրազ և Պարսկաստան 4.50 տոլար:

Հասցէ. — "YEPRAD" Journal Armenienne
B. P. 382, Alep [SYRIE]

4. ՀԱՅ ՍԻՐՏ. Շարաթաթերթ, տարեկան բաժնեկին 1.50 տոլար:

Հասցէ. — "HY SIRD" Publishing Co.
102 N. 60th St. Phila., Pa.

5. ԲԱՆԲԵՐ, Հոգևոր Ամսաթերթ ամենուն համար, բաժնեկին՝ տարեկան — Ֆրանսա և Սուրիա 5 Ֆր. Արտասահման՝ 1.50 Շիլլին կամ 40 Ամերիկեան Սէնթ:

Հասցէ. — Redacteur H. N. Ghazarossian
29, Rue Fauchier, Marseille
FRANCE

ՎՐԻՊԱԿ

«Նոր Առեաքն» թիւ 20, էջ 155 Ա. սիւնակ վերէն տող 17 ին վրայ «Կրօնքը՝ խիղճը կ'ստեղծէ:» նախադասութիւնը կարդալ «Կրօնքը՝ խիղճը չ'ստեղծէր»:

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կրօնարարոյական, Գիտական, Կրթական երկշարաթաթերթ:

Արտօնատէր, Վեր. Կ. Յարութիւնեան
Պատասխանատու. Տնօրէն, Տ. Ճ. Խըլքեան
ԲԱԺՆԵԳԻՆ

Սուրիայ համար տարեկան 2 Մէճրա
Արտասահման » » 1 Տոլար

Հասցէ. —

NOR AVEDAPER
B. P. 287
ALEP SYRIE